յիլս երկնից Աբքայութեան ի կեանսն յաւիտենականս։ ,,

ԵՐԿՐԱՇԱՐԺ Ի ԴԱՎՐԷԺ.

Ի Դավրիժոյ ուղղեալ մի նամակէն կիմանամք որ, ամսոյս 15 ին լուսանալոյն կամ ընդ արշալոյսն՝ այս ինքն ժամը 4 էն 15 րոպէ անցած՝ մի բոպէի չափ տեւողութեամբ՝ հիւսիսէն հարաւ ցնցելով երկրաշարժ պատահած է։

Երկրաշարժի սաստկութենէն շատ շէնքեր վնասուած են։

—Արկուռոյ կործանման տարին ևս անդ այնպիսի՛ երկրաշարժ մի պատահած է եղել։—

Հայոց Եկեղեցիք և Առաջնորդարանն ևս թեթև խախտումներ ստացած է։

Փլատակաց ներքև մի քանի թրքեր մեռած են։

Ինչպէս որ բնական է, բնակիչքն առ հասարակ ահուդողի մէջ են եղած։

Ա. ԵՒ Բ. ԸՆԾԱՅԱՑԵՐՈՒԹԻՒՆՔ.

Շատ ժամանակ չէ՝ որ Ընծայաբերու-ն անուամբ երկու տեսարակներ մի գինի միոյ ի լոյս ընծայուեցան։

Առաջնոյն համար թէպէտ լռեցինք, սակայն երկրորդին համար՝ յորում մի պինակաւոր անձի վաքեալ գրէն եղած և կցուած նամակի խելացնոր արտայայտութիւնքը՝ անտանելի և աններելի էր մեղ լուութեան տալ և պատրաստ էինք մի քանի գիտողութեամբք ի զգուշութիւն հրաւիրել ողջամիտ ընթերցողները՝ եթէ ի հաւատարիմ աղբերաց լսած չլինէինք՝ զի Պ. Գիւմրեցւոյ նպատակին և կամաց հակառակ եղած է այս նամակի հրատարակութիւնը, և որպէս հաւաստեցին՝ պարունակութենէն տեղեկութիւն անդամ չունի, ուստի արդէն գրած և պատրաստած է հերքումները և պիտի յանձնէ ի մամուլ, վասն որոյ մեք ևս առ այժմ այսքանով կբաւականանամք, և կյուսամք որ՝ Պ. Գիւմրեցին մեր Եկեղեցւոյ և Ազգի շահերը քաջ կհասկանայ և այսուհետև այնպէս կշարժի՝ որ սպրդեալ թիւր կարծիքները կը ջրէ և իւր բարեկամաց գայթակղեալ մտքերը կհանդարտեցընէ, միանգամայն դիմակաւոր և վարձեալ նամակագրին անունը պարզապէս կը հրապարակէ, որպէս զի ամեն ճշմարիտ Հայ քաջ ճանաչէ զնա և զգուշանայ Հայութեան ճակտին նախատինք եղող այնպիսի՛ անդամէ։

ՀԱՅԵԱՑՔ.

Այսպիսի անուամբ ևս մի նոր գրքոյկ երևեցաւ՝ որ ի Տփխիս հրատարակեալ է։

Ինչպէս Տփխիսայ Մեղու-ն գրած էր, լաւ կլինի՝ որ գրքուկի հեղինակն ի միասին շրջէ, որպէս զի ի՛նչ միտք որ կամի արտայայտել՝ բերանացի բացատրէ և հասկացնէ ընթերցողաց, կամ թէ ամեն տեղ թարգմաններ վարձէ։

Ի՞նչ օգուտ Ազգին և ի՞նչ փառք հրատարակողին այսպիսի շփոթ և Բաբիլոնեան խառնակութեանց նման անմիտ պարունակութիւն ունեցող տետրակ հրատարակելէն։